

Հանդիպում ՀՀ Վայոց ձորի մարզպետի մոտ

16.04.2015



2015 թվականի ապրիլի 16-ին ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Մարգարյանն ընդունել է „ԱՄՔՈՐ,, կազմակերպության գյուղատնտեսական ծրագրերի ղեկավար Արմեն Խալաթյանին: Հանդիպմանը մասնակցում էին մարզպետի տեղակալ Սամվել Թարվերդյանը և Սալլի համայնքի ղեկավար Սամվել Ղազարյանը: Մարզպետը ողջունեց հյուրերին և նշեց, որ կարևորում է համայնքնային խնդիրների լուծման ցանկացած ծրագրի իրականացում, անկախ դրանց ծավալների: Հանդիպումը կայացել է Սալլի համայնքում իրականացվող „Համայնքի զարգացում՝ գյուղատնտեսության զարգացման և տեխնիկական աջակցության միջոցով,, ծրագրի շրջանակում: Արմեն Խալաթյանը ներկայացրեց նախկին տարիներին մարզում իրենց կողմից կատարված աշխատանքները և իրականացված ծրագրերը՝ մարզի 5 համայնքներում գյուղացիական կոոպերատիվների հիմնում և տարբեր աշխատանքներ կատարող գյուղտեխնիկայով նշված կոոպերատիվների զինում:

Ներկայացվեց, որ Սալլի համայնքում հիմնված կոոպերատիվին նույնպես կտրամադրվի գյուղտեխնիկա, կիրականացվի ոռոգելի ջրագծի վերանորոգում, ջրհավաք հորի կառուցում, ոռոգման ջրագծի արտաքին և ներքին ցանցի մաքրում: Բանախոսը նշեց, որ նոր գյուղտեխնիկայի գործադրման շնորհիվ կավելանա ջրդի վարելահողերի քանակը: Մարզպետը հետաքրքրվեց, թե համայնքում որքան աշնանացան և գարնանացան հերկ է իրականացվել: Համայնքի ղեկավարը տեղեկացրեց, որ կատարվել է 5 հա աշնանացան և 5 հա գարնանացան

հերկ, որը ծրագրի իրականացման արդյունքում կհասցվի 30-35 հա-ի: Մարզպետի տեղակալ Սամվել Թարվերդյանը նշեց, որ դա կարող է մեծ օժանդակություն դառնալ Սալիի նման փոքր համայնքի համար: Մարզպետ Հարություն Սարգսյանն ամփոփելով հանդիպումը՝ շնորհակալություն հայտնեց հյուրին և պատրաստակամություն՝ հատազա համագործակցության, ի շահ մարզում գյուղատնտեսության զարգացման: